ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աստուծո ողորմությամբ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը, սիրալիր հրավերովը ամենապատիվ Տ. Եղիշե պատրիարքի, մեկնում է ուխտի դեպի Ս. Քաղաք Երուսաղեմ, տանելու Իր օրհնությունը Սրբոց Հակոբյանց միաբանության և ժողովրդին, ու նաև Ս. Հարության Տաճարի նորոգության գործին:

Նորին Ս. Օծությունը Իր ճանապարհին մի քանի օր կմնա Լոնդոնում, ջերմ հրավերովը Քենտրբերիի Գերաշնորհ Արքեպիսկոպոսի, այս առթիվ Իր օրհնությունը տանելով գերաշնորհ հայրապետական պատվիրակին և Լոնդոնի հայ համայնքին:

Վեհափառ Հայրապետը նոյեմբերին կուղևորվի դեպի Եգիպտոս, հրավերովը թեմակալ առաջնորդի ու կտանի Իր օրհնությունը Եգիպտոսի հայ հավատացյալ ժողովրդին:

Նորին Ս. Օծությունը ապա կճանապարհորդի դեպի Քոտայամ (Հնդկաստան), եղբայրական հրավերովը Մալաբար քույր Եկեղեցու Պետ Բասիլիոս Բ Սրբազնագույն Կաթողիկոսի:

Նորին Ս. Օծությունը Հնդկաստանում կայցելի նաև Կալկաթայի և Բոմբեյի հայոց եկեղեցիները, բաշխելով բոլորին օրհնություններ Ս. Էջմիածնից:

Վեհափառ Վազգեն Ա Կաթողիկոսին դեպի Երուսաղեմ կուղեկցեն գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը՝ վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի, հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետը՝ գավազանակիր, և ճարտարապետ Միքայել Մազմանյանը՝ անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի, իսկ դեպի Հնդկաստան՝ Վրաստանի հայոց թեմակալ առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը, գավազանակիր հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը:

Վեհափառ Հայրապետը դեկտեմբերի վերջերին Իր շքախմբով կվերադառնա Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

27 սեպտեմբերի 1963 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ